

ԼՈՒՐ-

-ԴԱ-

-ԼՈՒՐ



891.93-93

1298

Ф-31 Фактунгунд, Ч.

Һур-һур-һур: 2 н.

15/xii			701

9-93



ՎՐԹ. ՓՍՓԱԶՅԱՆ

# ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ

ՅՅՈՒԳՎՅԵ Է 1961 թ.

ՔՐԴԱԿԱՆ ՊՈՆՄԱ

Նկարներ  
Վ. ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԿՅԱՆԻ

A  $\frac{\pi}{30700}$



Պ Ե Տ Յ Ր Ա Տ

ԳՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՍԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ԲՆԿԱՆ 1937

Մ Ի Զ Ի Ն Տ Ա Ր Ի Ք Ի Հ Ա Մ Ա Ր

Պատ. խմբագիր՝ Մուր. Չ ա Ր Յ ա ն  
Տեխ. խմբագիր՝ Ս Տ. Ա Ղ Ր Ո Ւ Ն Յ ա ն  
Սրբագրիչ՝ Ա. Գասպարյան

Հրատ. 4065. Գրավիճակի վճարը Կ—4635

Պատվեր 953. Տիրած 4000

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի փող. 65

Անատեղ, Սև-Ղրի չճնաղ լեզերքներին եր, վոր ասլ-  
րում եր Հասոն:

Յերկրի սիրուն և քաջ պատանին եր նա: Վոչ մի  
մարդ չեր կարող նրան զինաթափ անել: Ավազակը սիրա  
չուներ նրա հօտի շուրջը ման գալ և վոչ իսն գալլը վոչ-  
խարի կողքին քարչ գալ: Հասոն վորքան բարի լեր դե-  
պի լավը, այնքան ել անգութ եր դեպի չարը:

Սիրուն եր Հասոն, նոր ծագող արեի պես չճնաղ:  
Յերկրի աղջիկների խելքը գնում եր նրան տեսնելիս:  
Հապա նրա նվազէլը: Նրա սրնգից հանած ձայները կա-  
րելի՞ չեր, վոր հրեշտակները ունենալին այնքան զրա-  
վիչ, այնքան սիրահույզ: Ձայներ, վորոնք հօտում ելին  
մեկամողձիկ, քչքչում ելին վորպես հեզիկ վտակ, գայլաչ-  
լում վորպես սիրահար սոխակ:

Մարդ թե անատուն, այդ ձայնը լսելիս, ակամա մոտ  
ելին գալիս, քարանում և աշխատում ելին չկորցնել վոչ  
մի խաղ, վոչ մի գեղգեղանքը:

Նստում եր Հասոն ժայռերի գլխին, աչքերը ուղղած  
լայն հորիզոնին, Սև-Ղուրը գալարապտույտ վտոքերի  
տակին, զզզուեն գեփյուռը խաղում ճակատին:

Յեվ նա նվազում եր:

Պետք եր տեսնել թե ինչպես վոչխարներն այն ան-  
միա՝ մոռացել ելին ուտելը, մոտ ելին գալիս:

Հասոն քարերին եր դողացնում, Սև-Ղրի ալիքները  
հուզում, բնությունն եր քարացնում, գեփյուռին վողբաց-  
նում ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը զրը-  
գում:

Այդպես եր Հասոն:

Ել ինչպես վոչխարները չճնաղանդելին նրա լերդի  
ձայնին:

Ինքը չեր շարժվում, վոչխարներին նվազով կան-  
չում եր մոտը:



Արածացնելու համար՝ «Բերիկը» ջրելու համար՝ «խոզաբը» և հեղ անասուններին շուրջը ժողովելու համար ածում էր «վոչխարի կոչը»:

Վոչխարները լսելուն պես՝ թողնում էլին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասուլի շուրջը հավաքվում:

Ապրում էր Հասոն այդպես չերջանիկ, հեռու մարդկանցից, բնության գրկում, լեռների կրճքին: Յերջանիկ էր նա վորպես մի իշխան՝ սիրված իր հորից, նվիրված էր չերգին:

---

Բայց մի ուր Հասոն տեսավ աղալի միակ աղջկան: Տեսավ ու սիրեց:

Սիրուն էր Զալխեն: Կախարդիչ աչքերը, սավվի չեր բոլը, կամար՝ ունքերը, գողախկ՝ թշերը:

Զալխեն էլ տեսավ Հասուլին, Զալխեն էլ սիրեց Հասուլին: Տխրեց խիստ Հասոն, կորցրեց աշխուժութուն, կորցրեց զվարթութուն: Որերով պտույտ էր գործում պայտաի շուրջը, մինչև իսկ լեթե վոչխարն այնտեղ ուտելու խոտ չգտներ: Աչքը աշտարակին, նվագում էր ախրագին, սիրաը սրնգի մեջ դնում ու արտասվում:

Զալխեն էլ տանջվում էր: Թագնված վարագուրի լետևում, աչքը Հասուլից չեր հեռացնում, վոչ էլ ալկանջը նրա նվագից: Վոչ ուտում էր և վոչ էլ խմում— տանջվում էր միայն:

Յերկուսն էլ գիտելին, վոր շատ հեռու չեն միմյանցից, վոր աղալի աղջիկը հովվին կին չի լինիլ:

Բայց սերը աստծո կրակն է, շատ զորեղ կրակ: Նա կտրում, անցնում էր ամեն հեռավորութուն, թափանցում էր ամեն խորութուն:

Սերը վոչ հեռավորութուն է ճանաչում, վոչ էլ խրտրութուն:

---

Հեռատես էր աղան ու խիստ խորամանկ: Շուտով նկատեց Հասուլի սերը: Բարկացավ, կատաղեց, ուղեց սպա-

նել հանդուզն հովվին բայց խոհեմ եր. չուզեց իր տան  
անուռը կտորել հավխալան և մի հովվի արջուռը մանել  
ընդունան:

Բայց ինչ կասելին՝ չեթե իմանալին, վոր մի չորան  
նրա աղջկա չետիցն ե ընկել: Պե՛տք եր Հասուին հեռա-  
ցնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանկուքյան: Պետք  
եր աչնպիսի մի խազ սարքել, վոր Հասոն ինքը թող-  
ներ հեռանար և մեկ ել այդ կողմերը չվերադառնար:

Մտածեց աղան, յերկար մտածեց ու գտավ հնարքը:

Մարդ ուղարկեց, կանչեց Հասուին և ասաց նրան.

«Գիտեմ, Հասո, — ասաց չար աղան, — գիտեմ վոր սի-  
րում ես դու իմ աղջկան: Քաջ տղա չես ինքդ, լսել եմ,  
լավ ել ածուս ես սրինդ: Աղջիկս քեզ կտամ, միայն կը-  
ղնեմ մի պայման:

«Լսել եմ, վոր վոչխարները քեզ հնազանդվում են և  
սրնդիդ ձաչնից զրավված՝ քեզ մոտ գալիս են:

«Գետնից մինչ այդ բարձր աշտարակը, տեսնում ես  
նրան, զնել կտամ փայտա սանդուխքը. դու կնստես աչն-  
տեղ, բարձրում, վոչխարները կժողովվեն ցածրում: Ահա  
պայմանը: Յեթե դու բարձրից, սրինդդ հնչեցնելով, կա-  
րողացար վոչխարներին սանդուխքի վրայով քեզ մոտ վեր  
հանել, աչն ժամանա՝ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիլը:

«Ապա թե վոչ՝ խայտառակ չեղիր, ինչ ունես-չու-  
նես հավաքիր, և քանի շուտ ե՝ այս կողմերից հեռացիր:  
Մի հովիվ աղալի փեսա չի լինիլ, այդ ել խելքիցդ հա-  
նիր»...

Հասոն ժպտաց, խոր զլուխ տվեց:

— Տե՛ր ես, աղա. — ասաց, — ապածիզ համաձայն եմ:

Տեկ շինել տվեց աղան փայտա սանդուխքը: Իննը-  
սուռն և իննը աստիճան ուներ նա: Հասուից ծածուկ կտա-  
րեց նրա մեջտեղի մի աստիճանը. կցարածը նույն կեր-  
պով դրեց իր տեղը, աչնպես վոր վոչինչ չեր չեքեվում.  
բայց մի թուղ սեղմում հերիք կլինեք փայտը ձգելու և



մի աստիճանից դեպի մյուսը՝ մի գազաչափ տեղ բայ  
թողնելու: Այդպիսով ել վոչխարների անցնելը անհնար  
դարձնելու:

Ո՛, չնք եր ազան, հպարտ եր և անպարտ:

Այդ խայտառակութունն արեց չար ազան: Հասույին  
աշտարակի ծայրը հանեց, Զալխեյին պատշգամբի վրա՝  
ու ասաց հովվին.

— Ահա Զալխեն, խրախուսվիր, հալալ ե քեզ նա, թե  
ասածս արիր:

Զալխեն տեսավ Հասույին, ժպտաց նրան, կարմրեց  
և նշան աբավ: Իմացավ հովիվը, վոր Զալխեն ել սիրու՞մ  
եր նրան: Սիրտն ուրախութունով լցվեց: Առավ սրինգը,  
բերնին դրեց, քյուղղը, ծառից նվագն սկսեց:

Թ՛նդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին  
քարեր: Հուզվեց չար ազան, խելահեղ՝ Զալխեն, քիչ  
մնաց թռներ ու ցած դնար, վոչխարների պես ընկներ  
Հասույի վոտքերը:

Շարժվեցին վոչխարները, մոտեցան սանդուխքին ու  
սկսեցին միմյանց չետեկից բարձրանալ աշտարակն ի վեր:

— Լո՛, լո՛, լո՛ Սև-ջրի չորան, սար ու ձոր մղկտաց-  
նող ջիվան, գազան մեղմացնող, քար ու ծառ հուզող  
չորան: Ինչո՞ւ հիմարի պես հավատացիր աղային, ինչո՞ւ  
բարձրացար ծայրն աշտարակի: Զուր դառնալիր մարդ  
փորում, Հասու: Յերանի չմտնելիք այս աշխարհը՝ վոր լի չե  
աղաներով: Յերանի չտեսնելիք արևի փայլը՝ վոր քեզ  
այրեց խորովեց, Սև-ջրի ալիքները՝ վորը քեզ արորեց,  
չամբի սրորվելը՝ վոր քեզ կախարդեց:

— Լո՛, լո՛, լո՛, ... Մի՛թե քյուղղն այդքան անազնիվ չե-  
ղավ, վոր սերը ծաղրեց: Մի՛թե նրա խիղճը կորավ, աս-  
տվածը մոռացավ:

Խեղճ Հասույին ինչո՞ւ շեյթանի բաժին արավ, աշ-  
խարհը լաց ու սուգի մեջ դրավ... Լո՛, լո՛...



Հնա բարձրանում ելին վոչխարները, հրում միմյանց սրնդի ձայնից դուռթված՝ մոտանում ելին անդունդը: Աչքերը Հասուլին ուղղած՝ բարձրանում ելին:

Աշխարհը զմայլված դիտում եր: Չար աղան քար եր կտրել: Զալխեն մինչև կես մեջքը կռացել, ձեռները Հասուլին պարզել գոչում եր.

— Յես քոնն եմ, Հասո, քոնը հավիտյան: Յես քեզ սիրում եմ, աչքանն եմ սիրում, վորքան չեր սիրում կելլանը Մեջլումին: Յես քեզ սիրում եմ, աչքանն եմ սիրում, վորքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհը արևին և բուսը հողին:

Դո՛ւ լես իմ ճրագը, դու լես իմ վարդը, դո՛ւ լես իմ արևը ու դո՛ւ իմ հողը...

Լսում եր Հասոն, սիրտը լսլսշոռմ: Ածում եր, ածում, նվազն ուժովցնում:

Հասավ ների՛) այժը կոտրած աստիճանին, զգաց վոր, մահը աչքի առաջն ե, բայց դուռթված եր, վոտքը դրեց փայտի վրա:

Շարժվեց փայտը, լավեց մի մայուն և սիրուն ներին պտույտ գործելով ողի մեջ. դնաց ջախջախովելու անդունդի քարերի վրա:


Մղկաց Հասոն:— Հել վախ, իմ սիրուն ների,—կանչեց սրտաբուղխ: Բայց աչքը չերք Զալխելին ընկավ մոռացավ ներին: Սրինգը դրեց բերնին և սկսեց ածել:

Վոչխարները տեսան ներիի վիճակը. կանգ առին, մասածեցին լես գնալ, բայց դուռթված ելին, առաջ գնացին:

Փորձեց առաջին վոչխարը, լետ-լետ քաշվեց, առջևի վոտքերը բարձրացրեց և ուզեց թռնել: Մի մայուն արձակեց և գնաց այժի լետեից:

— Վախ, վախ, իմ անմեղ վոչխար, մղկաց Հասոն:

1) Առաջնորդող այժ:



Նայեց Ջալիսելին, մոռացավ վոչխարին, ուժ տալով նվազին:

Փորձեց լերկրորդ վոչխարը, մինչև իսկ թռավ, բայց կպավ աստիճանին, մի պտուղտ գործեց, խղճուկ կերպով մայեց և զնայց դիպի խոր անդունդը:

— Թռե՛ք, անցե՛ք իմ սիրուն վոչխարներ, լերգում եր Հասոն, թռե՛ք, իմ թավամազ գառնուկներ, չեկե՛ք ձեր ախրոջ մոտ:

Վոչխարները ել չելին շարժվում. չեա-չեա ելին գնում:

Կատաղեց Հասոն—բացվածքը չեր տեսնում: Վորքան սեր ուներ ու զգացմունք, ներշնչեց սրնգին. զեղզե-դանքներով քարացրեց բնությունը.—բայց վոչխարները չեա-չեա ելին գնում:

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ չեղավ Ջալիսեն հուսահատությունից:

Փոխեց Հասոն լեղանակը:

Այժմ ինքն ել չգիտեր՝ ինչ եր նվազածը:

Դադարել եր քամին, կանգնել եր ջուրը, լուել ամեն ինչ:

Ո՞վ չի լսել «Լուր-գա-լուր»-ը, վորին չի դիմանա վնչ մի քար սիրտ: Վորին լսելով կթութոս սիրող սիրտը, կմարի: Վորին լսելով կգժվի սիրող աղջիկը, կլքժ-վի և դեպի սիրածը կսլանա:

Աքանչելի չե նա. չերգերի վառքն և նա:

Նրեշտակների մրմունջը, Հասոյի հոգին և նա:

Շարժվեցին վոչխարները, գլորվեցին շատերը:

Շարժվեց և Հասոն, կուացավ, տեսավ բացվածքը:

Հասկացավ ամեն ինչ, նայեց աղալին:

Ձգաց, վոր Ջալիսեն կորած եր իր համար, ինքն ել աշխարհի համար:

Շարժվեց Ջալիսեն ել, նայեց աղալին, նայեց Հասոյին:

Զգաց, վոր Հասոն կորել ե իր համար, ինքն ել աշխարհի համար:

Յեվ լռեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուր»-ը դադարեց նրա, խաղի վերջին թըր-թոռմը գնաց մեռնելու ողի մեջ...

Հեռո... լավեց մի ճիչ:

Յեվ լերկու մարմիններն արագ պտույտ գործելով ողի մեջ, գնացին միասին, ջախջախվելու անդունդի խորքում... և միմյանց զրկում:

Հասոն ու Զալխեն ելին դրանք...

Пров.



A  $\frac{\text{II}}{30700}$

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030700

[104]

29

II  
30700

ԳՐԵՆ Զ Ռ.

Վ. ՓԱՓԱԶՅԱՆ  
ԼՄՐ-ԴԱ-ԼՄՐ  
ԳԻՅԱՐՄ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ



Մ. 1940